ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«21» նոյեմբերի 2025 թվականի N: 671 - Ա ք. Գյումրի

ԿԱՐԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Կարեն Մարտիրոսյանի 2025 թվականի նոյեմբերի 19-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բայանդուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարեն Մարտիրոսյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից մնացած մասը՝ 3 աշխատանքային օր՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ:

2. Կարեն Մարտիրոսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բայանդուրի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության դասվար Անահիտ Հակոբյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է